*16* Եւ[1] նա յղեաց[2] նմա[3] պատասխանի այսպէս. *17* «Վատ եւ թոյլ անձին[4] Վախտան-
գա՛յ[5] ի խոչքորաց[6] դասուց, որ[7] զաղբս ճաշակեն, ողջո՛յն: *18* Այլ[8] թէպէտ[9] ընդ մահն
Միհրանայ[10] խնդացի, բայց ընդ քո[11] անմտութիւնդ[12] լացի, որ զնորա մահն[13] լսեցեր[14]
եւ զիմ կորովութիւնս ծանեար[15], զոր ինձ ետ[16] Աստուած[17]: *19* Զիա՞րդ իշխեցեր գալ ի
վերայ եկեղեցւոյ[18] Աստուծոյ[19]: *20* Այլ[20] թէ սէր եկիր առնել[21], զկինդ ի հետ ընդէ՞ր ա-
ծեր[22], մի՞թէ որդի[23] խնդրես յարանց[24] մերոց: *21* Եւ[25] եթէ[26] սիրոյ պատճառանաւք եկիր,
զիմ քաղաքդ է՞ր[27] շինեցեր եւ ամրոցս[28]: *22* Այլ[29] գիտեմ, զի սուտ ես եւ[30] իբրեւ զշուն
քծնիս[31]: *23* Արդ՝[32] զկեանս[33] քո առաջի մահու դիր[34] եւ[35] յերկրէս արի ե՛լ[36] եւ[37] գնա՛[38]
խաղաղութեամբ: *24* Ապա թէ ոչ՝ զմահն[39], որ ընդ քեզ անցանելոց է[40], զայն ամենայն
երկիր տեսանէ»:

---

1 *hmo* իսկ *փխ* Եւ *(blsv)*
2 *mo* յուղարկեաց, *h* ուղարկեաց *փխ* յղեաց *(blsv)*
3 *ho չիք* նմա
4 *hmov* անձինդ *փխ* անձին *(ls)*
5 *blo* Վաղթանկայ, *hm* Վախթանկայ *փխ* Վախտանգայ *(sv)*
6 *blv₄* ի խոչքրաց, *ho* ի խոչքորոց, *msv* եւ խոզ քոյոց *փխ* ի խոչքորաց *(nq)*
7 *sv* որք
8 *hmo չիք* այլ
9 *lo* թէպէտ եւ
10 *hmo* Միհրանայ մահն *փխ* մահն Միհրանայ *(blsv)*
11 *hmo* զքո *փխ* ընդ քո *(bl)*
12 *sv* անմտութիւնդ քո *փխ* քո անմտութիւնդ
13 *sv* զմահն նորա *փխ* զնորա մահն
14 *h* լսեցիր
15 *o* ծաներ
16 *bhmo* ետ ինձ *փխ* ինձ ետ *(lsv)*
17 *v¹ չիք* զոր ինձ ետ Աստուած
18 *sv* եկեղեցւոյն
19 *hmo չիք* Զիարդ իշխեցեր … Աստուծոյ *(1 տող)*
20 *hmo չիք* Այլ
21 *o* արկանել *փխ* առնել
22 *hmo* ընդէր ածեր ի հետ *փխ* ի հետ … ածեր *(blsv)*
23 *hmo* որդիս
24 *movv⁴* յերանաց, *h* երանաց *փխ* յարանց *(blnqs)*
25 *hmo* Կամ *փխ* Եւ *(blsv)*
26 *m* թէ
27 *hmo* ընդէր *փխ* էր *(blsv)*
28 *hmo* կամ բերդ *փխ* եւ ամրոցս *(blsv)*
29 *hm չիք* Այլ
30 *ho չիք* եւ
31 *hmov³* կծկիս *փխ* քծնիս *(blsv)*
32 *h* Եւ *փխ* Արդ / *mo չիք* Արդ
33 *h* կեանս
34 *ho* եդեր *փխ* դիր
35 *ho չիք* եւ
36 *ho* ել արի *փխ* արի ել
37 *s չիք* ել եւ
38 *m* գնալ *փխ* գնա
39 *h* զմահ
40 *hmo* անցուցանելոց եմ *փխ* անցանելոց է *(blsv)*